առնոյր լինել ինձ երկրորդ: *117* Մարդ, զոր եւ առնէի՝ անդէն եւ անդ հասեալ մաւտ անկանէին ի դաւաճանութիւն[1] նենգիչքն, եւ արբուցեալ[2] հրապոյրս պղտորս՝ ասէին. «Ո՛վ անմիտ մարդիկ, ընդէ՞ր վաստակիք յանաւգուտս. հի՞մ լայք[3] ի զուր ի խորշակահար տեղւոջդ, եւ խաւլութեամբ անձնամահք լինիք: *118* Զի են ի Մամիկոնէից տանէ աւագ ծառայք ոմանք, եւ այլ քահանայ աւագ[4] որ է ի տանն, որոց[5] ընդ մեզ բանք են երդմամբ, թէ երբ եւ է՝ Ղազարայ իսկ չտամ հանգչել այդր, թող թէ նորա ումեք»: *119* Եւ այսպիսի բանիւք թուլացեալ[6] լսողքն՝ այնուհետեւ ի շալակս իւրեանց առաւել քան ի տեղիդ փութային համբարել[7]: *120* Սակայն ես նման մեղուի բերելով յամենայն կողմանց՝ բաւական լինէի ե՛ւ ծախողացն ե՛ւ մթերից տեղւոյն:

121 Բայց դու, տէր, այր յերկարայուշ ես եւ անմոռաց, մանաւանդ թէ ըստ ի քեզ հոգասիրութեանդ՝ եւ կամաւ եւս խորհիցիս զյիշելդ[8], զտուեալ պատգամն երանելւոյն Յովհաննու[9], Գիւտայ կաթողիկոսի եղբաւրորդւոյն, քեզ տեառն ի Սեւկոյ դրախտին՝ յարանց ոմանց, որք խոստանալով քեզ տեառն կարասի՝ խնդրէին զտեղիդ: *122* Եւ քո տեառն կոչեցեալ զտէր Վարդ, զքո եղբայր, եւ զՀայդիկ եւ զիմ անարժանութիւնս՝ հրամայեցեր միւսանգամ[10] երկրորդել տեառն Յովհաննու զպատգամսն. յոր ասացեալ քո տեառն եւ այլ բազում ինչ բանս՝ գլուխ պատգամի պատասխանւոյն արարեալ, եթէ «Պարտ էր նոցա իսկ ածել[11] զմտաւ, եւ զայդպիսի ինչ չյղել առ իս. բայց որովհետեւ նոքա անզգամեցան՝ սակայն ես զայսպիսի քրտամբ մեծ զվաստակս եւ բազում աշխատութեամբ զծախս՝ վատ վաճառականութեամբ ընդ թեթեւ ընչի տալ ոչ կարեմ, եւ ոչ զհոգեւոր եւ զյաւիտենական գանձ՝ անպիտոյ[12] եւ անցաւոր կարասւոյ փոխանակել»: *123* Եւ ընդ տեառն Յովհաննու[13] զայրացար, թէ «Բնաւ իբրեւ քեզ առն լսել իսկ է՞ր արժան[14] զայդպիսի բանս, թող թէ առ իս բերել»:

---

1 *Զ.* ի դաւաճանութեբ *(պատուով,* բ-*ի վրայ ջնջման (?) նշանով). Ամտ.* ի դաւաճանութեամբ. *այսպէս ըստ ուղղագրութեան ԲԳտ.*

2 *Զ.* արբուցեալս

3 *Թուի ուղղելի* հի՞մ կայք

4 *ՁԱտ.* քահանայն Աւաք

5 *Գտ. ուղղել է* որոյ

6 *Զ. նախ՝* թողացեալ, *յետոյ՝ ուղղած այսպէս*

7 *ՁԱԲտ.* համբերել. *Գտ. ուղղագրել է այսպէս (ըստ Ն. Բ.)*

8 *Վ.* զյիշեալդ

9 *Զ.* յոհաննու

10 *Վ.* միանգամ

11 *Վ.* նոցա ածել իսկ

12 *Վ.* անպիտուոյ

13 *ՁՏՏ.* յովհաննայ

14 *Ամտ. ուղղագրել էր* լսել իսկ չէր արժան